



Ն/11.4.3/23532-2022

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 548 - L

«20» 05 2022 թ.

ք. Երևան

**ԱՐՏԱԿԱՐԳ ՈՒՍԿՐԹԱԿՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՃՆԱԿԱԳՄԻՆ «ՀԱՎԱՔ» ԵՎ «ՏԱԳՆԱԿ» ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ՈՒ ԱՅՂ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 1279 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԹԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով ու 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Փրկարարական ծառայության կանոնագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով ու ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-L որոշմամբ հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

**1. Հաստատել՝**

1) Արտակարգ իրավիճակների նախարարության անձնակազմին «Հավաք» և «Տագնապ» ազդանշանների հայտարարման ու այդ ազդանշաններով իրականացվող գործողությունների կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Արտակարգ իրավիճակների նախարարության՝ անձնակազմի (ըստ ստորաբաժանման անվանման) հավաքի ամփոփագիրը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Արտակարգ իրավիճակների նախարարության անձնակազմի հավաքի ամփոփագիրը՝ համաձայն հավելված 3-ի.

4) Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ հերթափոխի կողմից իրականացված ազդարարման և Փրկարար ծառայության անձնակազմի հավաքի ամփոփագիրը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության անձնակազմին «Հավաք» և «Տագնապ» ազդանշանների հայտարարման ու այդ ազդանշաններով իրականացվող գործողությունների կարգը սահմանելու մասին» թիվ 1279 հրամանը:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

20.05.2022

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՐՈՒԿՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246 **Ա. ՓԱՄԲՐՈՒԿՅԱՆ**

## Կ Ա Ր Գ

### ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ

### ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ «ՀԱՎԱՔ» ԵՎ «ՏԱԳՆԱՊ»

### ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ՈՒ ԱՅԴ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) անձնակազմին «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանների հայտարարումն ու իրականացվող գործողությունները:

2. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանները ազդարարման հատուկ տեսակներ են, որոնց հայտարարման դեպքում անձնակազմը պարտավոր է սահմանված ժամկետներում ներկայանալ աշխատանքի (ծառայության) վայր և իրականացնել համապատասխան գործողություններ:

3. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանները հայտարարվում են արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ դրա առաջացման, ուժեղացված կամ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու դեպքում, ինչպես նաև ստուգման կամ ուսումնական նպատակով:

4. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանները կարող են հայտարարվել Նախարարության հիմնական ու աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ ստորաբաժանումներ), գրասենյակի ու ենթակա

մարմնի, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) ու փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) ողջ անձնակազմին (վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, փրկարարական և քաղաքացիական ծառայողներին, տեխնիկական սպասարկողներին, պայմանագրային հիմունքներով աշխատողներին, օգնականներին) կամ անձնակազմի մի մասին:

5. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանները Նախարարության անձնակազմին կարող են հայտարարվել ցանկացած ժամանակ:

6. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշաններ հայտարարելու իրավունքը վերապահվում է Վարչապետի աշխատակազմի ղեկավարին կամ նրա կողմից լիազորված անձին, Արտակարգ իրավիճակների նախարարին (այսուհետ՝ Նախարար) կամ նրա կողմից լիազորված անձին, ինչպես նաև տեսչական ստուգում անցկացնող պաշտոնատար անձին՝ վերջինիս վերապահված լիազորությունների շրջանակներում:

7. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանները կարող են հայտարարվել՝

1) Նախարարի կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ Նախարարության ողջ անձնակազմին կամ անձնակազմի մի մասին.

2) Նախարարության ստորաբաժանումների, գրասենյակի ու ենթակա մարմնի, ինչպես նաև կազմակերպությունների ու ընկերության ղեկավարների կողմից (Նախարարի գիտությամբ)՝ ենթակա անձնակազմին կամ անձնակազմի մի մասին:

8. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանները հայտարարվում են Նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն), մարզային փրկարարական վարչությունների ճգնաժամային կառավարման կենտրոնների ու Երևան քաղաքի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման բաժնի միջոցով:

9. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշաններ հայտարարելու ժամանակ աշխատակիցներին (ծառայողներին) արձակուրդից և գործուղումից հետ կանչելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

## 2. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Համապատասխան աշխատանքային ռեժիմների փոխադրման ժամանակ պատրաստականության աստիճանների անցնելու դեպքում «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանների հայտարարման և անձնակազմի կողմից իրականացվող գործողությունների կարգը սահմանվում է համապատասխան պլաններով:

11. Ծառայության Կենտրոնի օպերատիվ հերթափոխը արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ դրա առաջացման մասին տեղեկատվություն ստանալու դեպքում, ճշտում է տեղեկատվության իսկությունը, զեկուցում Նախարարին ու Ծառայության տնօրենին, նրանց կարգադրությամբ իրականացնում Նախարարության ղեկավար կազմի և համապատասխան ստորաբաժանումների ազդարարում՝ փոխանցելով «Հայտարարված է հավաք: Ներկայանալ ծառայության» ազդանշանը: Անհրաժեշտության դեպքում՝ ըստ դեպքի կամ պատահարի բարդության աստիճանի, տեղեկատվությունը կարող է փոխանցվել նաև պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին, Երևանի քաղաքապետին, ինչպես նաև համապատասխան պլաններով, ծրագրերով, հրահանգներով, պայմանագրերով ու այլ փաստաթղթերով նախատեսված այլ մարմինների ղեկավարներին կամ նրանց պարտականությունները կատարող անձանց, ինչպես նաև Ոստիկանության ու Ազգային անվտանգության ծառայության օպերատիվ հերթապահներին:

12. Նախարարության ստորաբաժանումների, գրասենյակի, ենթակա մարմնի, ինչպես նաև կազմակերպությունների ու ընկերության ղեկավարները, ստանալով «Հայտարարված է հավաք: Ներկայանալ ծառայության» ազդանշանը, կազմակերպում են ենթակա անձնակազմի ազդարարումը և աշխատանքի (ծառայության) վայր ներկայանալը:

13. Ծառայության մարզային փրկարարական վարչությունների ճգնաժամային կառավարման կենտրոններն ու Երևան քաղաքի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման բաժինը, ստանալով համապատասխան ազդանշանը, իրականացնում են ենթակա անձնակազմի, մարզի ու Երևան քաղաքի ղեկավար կազմի (այդ թվում՝ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների), քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տարիանման հանձնաժողովի, համապատասխան

տեղական ինքնակառավարման մարմինների ու զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների ղեկավարների ազդարարումը:

14. Նախարարության ստորաբաժանումների, գրասենյակի, ենթակա մարմնի, ինչպես նաև զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների ու ընկերության ղեկավարները ստացված ազդանշաններն ու կարգադրությունները ենթակա անձնակազմին փոխանցում են գործող կապի միջոցներով:

15. Նախարարության ենթակա մարմնի՝ կապի միջոցների սարքինության և աշխատունակության ապահովման համար պատասխանատու ստորաբաժանումը (ստորաբաժանումները) Նախարարության ստորաբաժանումների ղեկավարների միջև անխափան կապի ապահովման նպատակով պարբերաբար իրականացնում են ստուգումներ՝ խափանված կապի վերականգնման համար ձեռնարկելով համապատասխան միջոցառումներ:

16. Կախված ստեղծված իրավիճակից և ծառայողական անհրաժեշտությունից՝ Նախարարության անձնակազմի ազդարարումը կարող է իրականացվել նաև սուրհանդակների միջոցով:

### 3. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳ

17. Նախարարության համապատասխան ստորաբաժանման անձնակազմը ստանալով «ՀԱՎԱՔ» կամ «ՏԱԳՆԱՊ» ազդանշանը՝ ազդանշանը հայտարարելու պահից 1 ժամ 30 րոպեի ընթացքում ժամանում է աշխատանքի (ծառայության) վայր՝ ներկայանալով իր անմիջական պետին՝ խնդրադրման նպատակով:

18. Ազդարարման ազդանշանը հայտարարելու պահից սկսած՝ 1 ժամ 45 րոպեի ընթացքում, հավաքի մասին տեղեկագիրը՝ համաձայն սույն կարգի 2-րդ հավելվածով ներկայացված ամփոփագրի ձևի, տրամադրում են (էլեկտրոնային տարբերակով, իսկ կապի բացակայության դեպքում՝ թղթային տարբերակով՝ ողջամիտ ժամկետներում)՝

1) Նախարարության ստորաբաժանումների, գրասենյակի, ինչպես նաև կազմակերպությունների ու ընկերության ղեկավարները՝ Նախարարության Գլխավոր քարտուղարին.

2) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների («Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը՝ փրկարարական ծառայողների մասով) ղեկավարները՝ Ծառայության Կենտրոնի օպերատիվ հերթապահին:

19. Սույն կարգի 18-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ ստորաբաժանումների հավաքի մասին տվյալների ամփոփումը՝ համաձայն սույն կարգի 3-րդ հավելվածով ներկայացված ամփոփագրի ձևի, կատարում է Նախարարության Գլխավոր քարտուղարի կողմից նշանակված համապատասխան պաշտոնատար անձը կամ Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և համապատասխան պլանով նախատեսված ժամկետում ներկայացնում Ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչություն:

20. Կենտրոնն ազդարարումը հայտարարելու պահից սկսած՝ 2 ժամ 15 րոպեի, ընթացքում ամփոփում է սույն կարգի 18-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ստորաբաժանումների հավաքի մասին տվյալները և, համաձայն սույն կարգի 4-րդ հավելվածով ներկայացված ամփոփագրի ձևի, տրամադրում Ծառայության տնօրենին (Քաղաքացիական պաշտպանության վարչությանը):

21. Նախարարի կամ նրա կողմից նշանակված պաշտոնատար անձի կողմից Նախարարության ստորաբաժանումների, ենթակա պետական մարմնի, ինչպես նաև կազմակերպությունների ու ընկերության ղեկավարների հետ անցկացվում է խորհրդակցություն, որի ընթացքում վերջիններիս հակիրճ ներկայացվում է իրավիճակը և տրվում հանձնարարական՝ ստեղծված իրավիճակի հանգամանքների բացահայտման ու բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Ստորաբաժանումների պետերը, իրենց հերթին, խնդրադրում են անձնակազմին՝ ըստ ուղղությունների տալով համապատասխան հանձնարարականներ՝ հստակ նշելով հիմնական կատարողներին, համակատարողներին ու կատարման ժամկետները:

22. Նախարարության ստորաբաժանումների, ենթակա մարմնի, գրասենյակի, ինչպես նաև կազմակերպությունների ու ընկերության ենթակա անձնակազմը գործում է՝ համաձայն համապատասխան քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության պլանների և իր կանոնադրության:

23. «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանների հայտարարման դեպքում հնարավորինս արագ և օպերատիվ կողմնորոշվելու, մասնագիտական հմտություններն ու ունակությունները կատարելագործելու, ինչպես նաև գործողություններն առավել օպերատիվ և համակարգված դարձնելու նպատակով Նախարարության անձնակազմը պարտավոր է պարբերաբար իրականացնել ուսումնական պարապմունքներ և վարժանքներ:





5.	Հայեցողական պաշտոններ գրադեցնող անձինք									
6.	Պայմանագրային հիմունքներով աշխատողներ									
7.	Օգնականներ									
<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>										

ստորաբաժանման ղեկավար՝ \_\_\_\_\_  
(կոչում, Ա.Ա., ստորագրություն)

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՎԱՔԻ

1. Սույն թվականի \_\_\_\_\_ -ին ժամը՝ \_\_\_\_\_-ին \_\_\_\_\_-ի կողմից ստացվել է \_\_\_\_\_ տեղեկատվությունը (ազդանշանը):
2. Ստացված ազդանշանի համաձայն կազմակերպվել է Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների, գրասենյակի, ենթակա մարմնի և կազմակերպությունների անհրաժեշտ անձնակազմի ազդարարում:
3. Ազդարարարվել է ընդամենը՝ \_\_\_\_\_ մարդ:
4. Ազդարարումը տևել է \_\_\_\_\_ րոպե, ժամը՝ \_\_\_\_\_-ից մինչև ժամը՝ \_\_\_\_\_-ը:
5. «Ժ+1 ժամ 30 րոպե» - ի դրությամբ հավաքը կազմել է \_\_\_\_\_ ծառայող, որը կազմում է ազդարարված անձնակազմի \_\_\_\_\_%:
6. «Ժ+1 ժամ 30 րոպե» - ի դրությամբ չեն ներկայացել \_\_\_\_\_ ծառայող, որոնցից՝
  - 1) հիվանդ՝ \_\_\_\_\_
  - 2) գործուղում՝ \_\_\_\_\_
  - 3) արձակուրդ՝ \_\_\_\_\_
  - 4) չեն ազդարարվել՝ \_\_\_\_\_
  - 5) բացակայում են՝ \_\_\_\_\_ :

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՎԱՔԻ

1. Սույն թվականի \_\_\_\_\_-ին ժ. \_\_\_\_\_-ին \_\_\_\_\_-ի կողմից ստացվել է \_\_\_\_\_ տեղեկատվությունը (ազդանշանը):
2. «Ժ.+1 րոպե» տեղեկատվությունը ճշտելու նպատակով կապ է հաստատվել \_\_\_\_\_ հետ, ինչի արդյունքում հաստատվել է ստացված ազդանշանի իսկությունը:
3. «Ժ.+3 րոպե» սկսած ազդանշանը փոխանցվել է՝
  - 1) Պետական կառավարման մարմինների ղեկավարներին կամ նրանց փոխարինող անձանց՝ \_\_\_\_\_ բաժանորդ,
  - 2) Պաշտպանության նախարարության, Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության օպերատիվ հերթապահներին՝ 3 բաժանորդ,
  - 3) Արտակարգ իրավիճակների նախարարությանը և Նախարարության ստորաբաժանումների ղեկավարներին՝ \_\_\_\_\_ բաժանորդ,
  - 4) Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ղեկավար կազմին, մարզային փրկարարական վարչությունների ճգնաժամային կառավարման կենտրոններին և Երևան քաղաքի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման բաժնին՝ \_\_\_\_\_ բաժանորդ:
4. Ազդարարարվել է ընդամենը՝ \_\_\_\_\_ մարդ:
5. Ազդարարումը տևել է՝ \_\_\_\_\_ րոպե, ժամը՝ \_\_\_\_\_-ից մինչև ժամը՝ \_\_\_\_\_-ը:

6. «Ժ.+1 ժամ 30 րոպեի» - ի դրությամբ ներկայացել է \_\_\_\_ ծառայող, որը կազմում է ազդարարված անձնակազմի \_\_\_\_%:

7. «Ժ.+1 ժամ 30 րոպեի» - ի դրությամբ չեն ներկայացել \_\_\_\_\_ ծառայող, որոնցից՝

1) հիվանդ՝ \_\_\_\_\_

2) գործուղում՝ \_\_\_\_\_

3) արձակուրդ՝ \_\_\_\_\_

4) չեն ազդարարվել՝ \_\_\_\_\_

5) բացակայում են՝ \_\_\_\_\_ :